ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

ԲՄ ԸՆԹԱՑԱԿԱՐԳՈՎ ԿՆՔՎԱԾ ՊԱՅՄԱՆԱԳՐՈՒՄ ԿԱՏԱՐՎԱԾ ՓՈՓՈԽՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ

Պատվիրատուն՝ ՀՀ պաշտպանության նախարարությունը, որը գտնվում է ք. Երևան, Բագրևանդի 5 հասցեում, ստորև ներկայացնում է «ՀՀ ՊՆ ՆՏԱՊ-ԲՄԾՁԲ-7/5» ծածկագրով ԲՄ ընթացակարգի արդյունքում 2018թ-ի ապրիլի 6-ին կնքված N ԲՄԾՁԲ-7/5-5 ծածկագրով գնման պայմանագրում 2018թ-ի դեկտեմբերի 21-ին կատարված փոփոխության (այսուհետև՝ Փոփոխություն) վերաբերյալ համառոտ տեղեկատվությունը:

Փոփոխության պատճառ: Պայմանագրի կողմերը փոխադարձ համաձայնությամբ որոշել են պայմանագրի վճարման ժամանակացույցերում կատարել փոփոխություն:

Փոփոխության նկարագրություն: Քանի որ սույն պայմանագրի կատարումը 57 287 580 ՀՀ դրամի դերձակի ծառայության մասով հնարավոր չի լինելու կատարել 2018թ. ընթացքում, ուստի Կողմերը փոխադարձ համաձայնությամբ որոշեցին Պայմանագրին կից վճարման ժամանակացույցում կատարել փոփոխություն՝ նախատեսելով 57 287 580 (հիսունյոթ միլիոն երկու հարյուր ութսունյոթ հազար հինգ հարյուր ութսուն) ՀՀ դրամի չափով կանխավճար՝ հաջորդ բյուջետային տարվա ընթացքում պայմանագրի կատարման դեպքում ֆինանսավորման խնդիր չունենալու նպատակով:

Փոփոխության հիմնավորում: Սույն փոփոխություն կատարվում է՝ հիմք ընդունելով Պայմանագրի 7.5 կետը: Սույն փոփոխությունը չի դասվում ՀՀ կառավարության 04.05.2017թ. № 526-Ն որոշման 56-րդ կետով սահմանված արհեստական փոփոխությունների շարքին: Պայմանագրում նման փոփոխություն կատարվում է առաջին անգամ:

Սույն հայտարարության հետ կապված լրացուցիչ տեղեկություններ ստանալու համար կարող եք դիմել գնումների համակարգող՝ ՀՀ ՊՆ ՆՏԱ դեպարտամենտի ԳՓՁ վարչության բաժնի գլխավոր մասնագետ Տ. Աբրահամյանը:

Հեռախոս՝ 010-29-44-18:

Էլ. փոստ՝ t.abrahamyan@mil.am:

Պատվիրատու՝ ՀՀ պաշտպանության նախարարություն:

ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ N 1
N ԲՄԾՁԲ-7/5-5 ԳՆՄԱՆ ՊԱՅՄԱՆԱԳՐԻՆ ԿԻՑ N 1 ՀԱՄԱՁԱՅՆԱԳՐԻ

ք. Երևան **21 -ը դեկտեմբերի 2018թ.**

ՀՀ պաշտպանության նախարարությունը, ի դեմս ՀՀ պաշտպանության նախարարի տեղակալ Մ. Ղամբարյանի, ով գործում է նախարարության կանոնադրության հիման վրա (այսուհետև՝ Պատվիրատու), մի կողմից և «Պահապան» ՍՊԸ-ն, ի դեմս Ընկերության տնօրեն Վ. Մելիք-Սարգսյանի, ով գործում է ընկերության կանոնադրության հիման վրա, այսուհետև Կատարող, մյուս կողմից, երկուսը միասին՝ Կողմեր՝ հիմք ընդունելով 06.04.2018թ. կնքված N ԲՄԾՁԲ-7/5-5 գնման Պայմանագրի (այսուհետև՝ Պայմանագիր) 7.5 կետը և ՀՀ կառավարության 04.05.2017թ. N526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման կարգի» 56-րդ կետի 6-րդ ենթակետի պահանջները ՝ փոխադարձ համաձայնությամբ որոշեցին կնքել սույն փոփոխությունը (այսուհետև՝ Փոփոխություն) հետևյալի մասին.

1. Փոփոխության առարկան

1.1 Քանի որ սույն պայմանագրի կատարումը 57 287 580 ՀՀ դրամի դերձակի ծառայության մասով հնարավոր չի լինելու կատարել 2018թ. ընթացքում, ուստի Կողմերը փոխադարձ համաձայնությամբ որոշեցին Պայմանագրին կից վճարման ժամանակացույցում կատարել փոփոխություն՝ նախատեսելով 57 287 580 (հիսունյոթ միլիոն երկու հարյուր ութսունյոթ հազար հինգ հարյուր ութսուն) ՀՀ դրամի չափով կանխավճար՝ հաջորդ բյուջետային տարվա ընթացքում պայմանագրի կատարման դեպքում ֆինանսավորման խնդիր չունենալու նպատակով:

1.2 Կանխավճարի տրամադրումը լիազորված մարմնի կողմից սույն փոփոխությունը հաշվառվելուց հետո՝ 3 բանկային օրվա ընթացքում բանկային երաշխիքի ապահովվածության դեպքում, բայց ոչ ուշ քան 25.12.2018թ. ներառյալ: Ծառայության մատուցման արդյունքում հաշվարկման ենթակա տույժերը Կատարողը պարտավոր է վճարել ՀՀ պետական բյուջեի համապատասխան հաշվեհամարին:

2. Այլ պայմաններ

2.1 Սույն Փոփոխությունն ուժի մեջ է մտնում Կողմերի ստորագրման պահից և գործում է մինչև փոխադարձ պարտավորությունների լրիվ կատարումը:

2.2 Սույն Փոփոխության մեջ չնշված՝ Կողմերի Պայմանագրով նախատեսված իրավունքները և պարտականությունները, Ծառայության հանձման-ընդունման, Կողմերի պատասխանատվության հետ կապված և այլ հարաբերություններ թողնվում են անփոփոխ:

2.3 Սույն Փոփոխությունը հանդիսանում է Պայմանագրի անբաժանելի մասը, կազմված է 1 էջից, հայերենով, կնքվում է երկու օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ, յուրաքանչյուր կողմին տրվում է մեկական օրինակ:

3. Կողմերի հասցեները, բանկային վավերապայմանները և ստորագրությունը:

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ	ԿԱՏԱՐՈՂ
ՀՀ պաշտպանության նախարարություն	«Պահապան» ՍՊԸ
ք. Երևան Բագրևանդի 5	ք. Երևան, Ավան Քուչակ 16/2
ՀՀ ՖՆ աշխատակազմի գործառնական վարչություն	«Հայբիզնեսբանկ» ՓԲԸ
Հ/Հ 900011440079	Հ/Հ 11500198133700
ՀՎՀՀ 02522157	ՀՎՀՀ 00882372
ՀՀ պաշտպանության նախարարի տեղակալ	տնօրեն
Մ. ՂԱՄԲԱՐՅԱՆ	Վ. ՄԵԼԻՔ-ՍԱՐԳՍՅԱՆ